ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2013թ. ապրիլի 11 թիվ 30 -Ա

ԱՇՏԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ 1986-1995ԹԹ. ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԸ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Զինապարտության մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 17-րդ հոդվածների պահանջներով Աշտարակի զորակոչային տեղամասում 1986-1995թթ. ծնված քաղաքացիների գարնանային զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1.Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարին՝

1) մարտ-հունիս ամիսներին սկսել 1986-1995թթ. ծնված քաղաքացիների զորակոչը,

2) զորակոչել արական սեռի այն քաղաքացիներին, որոնց զորակոչային տարկետումները լրանում են 2013 թվականի գարնանը և 18 տարին լրանում է զորակոչի օրը,

3) պարզել 1986 թվականի մինչև 1995 թվականի ծնված զինակոչիկների գրանցման տվյալները,

4) ստուգել տարկետման մեջ գտնվող զինակոչիկների փաստաթղթերի օրինականությունը և տեղեկանքների թարմացումը,

5) զորակոչը և զորակոչի զննման աշխատանքները սկսել 2013 թվականի մարտի 9-ին և ավարտել 2013 թվականի հունիսի 30-ին:

2. Հաստատել՝

1) զորակոչային հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,

2)զորակոչիկների բժշկական ստուգումներն անցկացնող հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու համար ստեղծված հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.

ա. հանձնաժողովի կողմից կազմված ակտերը ներկայացնել Արագածոտնի մարզային զորակոչային հանձնաժողովի հաստատմանը:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

1) ապահովել բժշկական հանձնաժողովի բոլոր անդամների պարտադիր ներկայությունը զորակոչային հանձնաժողովի աշխատանքներին,

2) բժշկական ստուգման և զորակոչի օրերին զորակոչային և բժշկական հանձնաժողովի անդամներին ազատել իրենց աշխատանքային պարտականություններից:

4. <<Աշտարակի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն Ա.Հովհաննիսյանին՝

1)կազմակերպված անցկացնել զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկների ֆլյուորոգրաֆիան, արյան խմբի որոշումը և ՄՈՊ-ը,

2) ժամանակին կազմակերպել այն զորակոչիկների բուժումը, որոնք զորակոչային հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման,

3) հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, հատուկ բժշկական սարքավորումներով, դեղորայքով,

4)զինկոմիսարիատի հայտով հատկացնել մեկ սանիտարական մեքենա՝ զորակոչիկներին Հանրապետական հավաքակայան տեղափոխելու համար:

5. Առաջարկում եմ Աշտարակի տարածաշրջանի համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝

1) օժանդակել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինկոմիսարիատ՝ համաձայն զինկոմիսարիատի ներկայացրած չվացուցակի և անհատական ծանուցագրերի:

6. Բոլոր համայնքների ղեկավարներին՝ զորակոչից առաջ զինկոմիսարիատի հետ միասին մանրամասն ճշտել զորակոչիկների տվյալները:

7. Հանձնարարել Աշտարակի ոստիկանության բաժնին՝

1) ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչի տեղամասում,

2) զինկոմիսարիատից ստացված տվյալների հիման վրա կազմակերպել այն անձանց որոնումները, որոնք խուսափում են ներկայանալ զորակոչային տեղամաս:

8. Սույն կարգադրության կատարման պատասխանատվությունը դնել Աշտարակի զինվորական կոմիսար Կ.Խաչատրյանի վրա:

Ա.ՀԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2013թ. ապրիլի 11- ի թիվ 30 -Ա
կարգադրության

ԿԱԶՄ

Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչային հանձնաժողովի

Կ.ԽԱՉԱՏՐՅԱՆ - Աշտարակի տարածքային զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Ա.ԱՓՈՅԱՆ - ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժնի պետի տեղակալ, կապիտան

Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ -հանձնաժողովի ավագ բժիշկ

Ե.ՂՈՒԿԱՍՅԱՆ - հանձնաժողովի քարտուղար

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2013թ. ապրիլի 11-ի թիվ 30 -Ա
կարգադրության

ԿԱԶՄ
Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարիատի գարնանային բժշկական զորակոչային հանձնաժողովի

Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - թերապևտ, ավագ բժիշկ
Գ.ՕՀԱՆՅԱՆ - վիրաբույժ
Ս.ՄԻՐԶՈՅԱՆ - ակնաբույժ
Ն.ՄԱՆՎԵԼՅԱՆ - մաշկավեներոլոգ
Հ.ԲՈՅԱԽՉՅԱՆ -քիթ-կոկորդ-ականջ
Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - նյարդաբան
Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ -հոգեբան
Ա.ՃԱՆՃԱՊԱՆՅԱՆ -սրտաբան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հավելված N 3
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2013թ. ապրիլի 11-ի թիվ 30 -Ա
կարգադրության

ԿԱԶՄ

Զորակոչիկների և զինծառայողների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու, ստուգելու հանձնաժողովի

Լ.ՎԱՍԻԼՅԱՆ - Աշտարակի զինկոմիսարիատի զորակոչային բաժանմունքի պետ
Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ -- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
ԳՅՈՒՂԱՊԵՏԵՐ - ըստ բնակավայրերի

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ